

ապաստանում է Հաղրատի վանդում։ Սյատեղ ահսնում է, որ մի մեծ, արատոսվոր թռչուն եկել; թառել է Ս. Նշան եկեղեցու խաչի թագի վրայ և երեք օր այդովէս կացել։ Վահանայրը և զիւզացիները զարմացած հարցրել են այդ ծերտնի խուզավէրդուն, թէ ինչ պիտի նշանակի այս ժռչունը։ Սա էլ պատառխանել է, թէ Լեզգիների աւերած շրջակայ եկեղեցիների գօրութիւնները ժռչունի ձեռով եկել, իգել են այս եկեղեցու վրայ։ Ըստ որ ասել է, թռչունը դէպի երկինք է ոստառնել և անհետացել։ Եւ այդ ժամանակից մինչև այժմ էլ ժողովուրդը կարծում է, որ շրջակայ Քորայրի, Ս. Գրիգորի, Սեղուի և այլ աւերակ եկեղեցիների գօրութիւնը Հաղրատի Ս. Նշանի վրայ է անցած։

Բ. Մի անգամ մի քանի հաղրատեցիներ վրացի խոզարածներից 30 խոզ են զողանում։ Մրանք զալիս են զողերին բռնում, սակայն երբ վերջիններու իրենց յանցանքը չեն յանձնն առնում, վրացիներն ստիպում են, որ զնան Ս. Նշանը համբուրեն և երգաւնեն, որ իրենք չեն զողացել։ Հաղրատեցիներն ստիպուած վեռում են, բայց հէնց որ ներս են մտնում, առայինը վայր է ընկնում, ուշազնաց լինում և մեռնում։ Վրացիները դարհուրած թռղնում փախչում են, իսկ հաղրատեցի դոզերն սկսում են բղաւել, թէ ճըր էք փախչում, մենք ենք զողացել, եկէք, տարէք, Սակայն վրացիները յիտ չեն դառնում, այլ բղաւում են, թէ սուրբ Նշանին մտադ արմնք։

Գ. Մի անգամ երբ լեզգիները յարձակւում են հաղրատեցիների վրայ, որ կսորին, սրանք տեսնում են, որ յանկարծ Ս. Նշան եկեղեցու գռները բացուեցին և մի գեղին զզեստով եղիսիկովոս գուրս եկաւ և խաչակիրելով հալածեց բոլոր լեզգիներին։ Հասկանալով, որ այդ գեղնազգեստ եղիսիկովոսը Ս. Նշանն է եղել, սկսել են նրան պիտինաթիկունք։ իսկ լեզգիների հալածուած տեղին էլ «յաղթուած փռս» կոչել։

ՕՀԱՆ ՕՇՆԵՑԻ

Օհան Օժնեցին եւ ասլօրինի երեխան։ — Օհան Օժնեցին ապրում էր Օձունում, նա իրը կով կթող պահում էր մի այրի կին։ Խնչուիս է պատահում, այդ այրի կինը՝ մի որդի է

ծնում։ Ժողովուրդը տեսնելով այս, սկսում է կասկածել Օհան Օձնեցու առարինի կեանքի վրայ և բամբասում նրան։

Օհան Օձնեցին սաստիկ վշտանալով՝ երեխայի ծննդեան ութօրեակին պատարագ է մատուցանում, հաւաքում է ժողովը բնին եկեղեցի, բերել է տալիս վերոյիշեալ կնոջ նորածին որդուն և ասում նրան։ Աստծու անունով հրամայում եմ քեզ, ով մանուկ, լեզու ել և ասա, թէ դու ում որդին ես։

Իսկոյն ութօրեայ երեխան լեզու է ենում և ասում։

—Ես հովիւ Օհանի որդին եմ։

Ժողովուրդը զարմանալով հրաշքից և խղճահարուելով, որ իզուր բամբասել է առարինի Օհան Օձնեցուն, ընկնում է նրա ոտները, մեղայ զալիս։ Բայց Օհան Օձնեցին լիովին շի ներում, այլ մի թեթև անէծք է զնում օձնեցիների վրայ՝ ասելով. «ՄՇ բոլորովին կտրուիք (աղքատանաք), ոչ ՀՀ բոլորովին հարատանաք», և այս է պատճառը, որ ֆձնեցիք ոչ շատ աղքատանում են, ոչ շատ հարատանում։

Ցետեղ Օհան Օձնեցին որոշում է հեռանալ այս գիւղից։ «Քնամ, ասում է նա, մի այնպիսի տեղ, ուր ոչ եղան լուծ կայ, ոչ կովի կիթ», որպէսզի ստիպուած շը լինի ծառաներ կամ կով կիթող կանայք պահել։

Նա բարձրանում է Ծրբուի լեռան և այնտեղ սկսում է ճգնել, բայց այդ տեղից միշտ հայեացն ընկնում է Օձուն գիւղի վրայ, որը յիշեցնում է նրան անարդար բամբասանքը, ուստի և իջնում է ձորը, հիմնում այժմեան փոքրիկ վանքը և շարունակում այստեղ ճգնել։

Օհան Օձնեցին եւ վիշապները. —Մի անդամ Օհան Օձնեցին պատարագ մատուցանելիս դրսից մի ֆշոց է լսում. իւր եօթը առրկաւազներից մինին ուզարկում է, որ իմանայ թէ ինչ ձայն է. Սարկաւագը զնում է և շի վերադառնում, ուստի և Օհան Օձնեցին երկրորդ, ապա երրորդ, շորորդ, վերջապէս եօթներորդ սարկաւազին է ուզարկում և երր տեսնում է, որ ոչ մինը շի վերադառնում, հէնց այնպէս զգեստաւորում դուրս է զալիս վանքից և տեսնում է երկու անապին օձ, իսկ ժայռի գլխին մի կին՝ դութանին հաց տանելիս։

Հասկանալով, որ այդ օձերն են կլանել իւր սարկաւագներին, և բարկանալով, որ այդ պառաւը իրեն խմաց չէ տուել, առում է. «Վիժեցէք սարկաւագներիս և բոլորդ էլ բար դարձէք»:

Խոկոյն օձերը վիճում են եօթը սարկաւագներին, սակայն մեռած, և բար դառնում, Քար է կտրում (դառնում) նուև այն պառաւ կինը, որ գութանին հաց էր տանում:

Սյոմ Օհան Օձնեցու զանքի և Սրբուի գիւղի մէջ ցոյց են տալիս այս երկու օձ-վիշտապները, որոնք ժայռի մէջ ընկած սև քարի շերտան են, մօտ յիմնական սաժէն երկարութեան։ Ժայռի զիլին, քարերի կոյտը և մի տափարակ քարի վրայ նկարուած ափուն ու գդալները պատկերացնել են տալիս գութանին հաց տանող պառաւին։

Օձ համարուած քարաշերտի մէջտեղից, որ այժմ աօձի պորտէ է կաշում, հոսում է երկաթաջուր։ Սյստեղ առաւելապէս բորստ և առաջարակ հիւանդոս մարդիկ մոմ են վառում, խունկ ծխում, և այդ ջրով լողանում, խմում, կամ իրենց վերքերին քսում, որ առողջանան։

Եյս ջրի մէջ մի քիչ աղ աւելացնելով տալիս են հիւանդ անասուններին խմելու, որ առողջանան։

Օհան Օձնեցին եւ յոյները.—Օհան Օձնեցու ժամանակ յոյները սաստիկ նեղում էին հայերին, նրանք տախտակը ծակում էին, անցկացնում հայի վիզը, երկու կողմում մի մի յոյն նստում, որոնք հայի զիլին ընկոյզ կոտրելով ման էին զալիս և զսարճանում։

Եյս նեղութիւնների ժամանակ մի կնոջ միակ, հիւանդոս որդին ցորենի հաց է ուղում, իսկ յոյները հայերի համար ցորենի հացը «պաս էին դարձեր», նրանք զարի հաց էին ուտում։ Եյս կինը դիմում է մի ջրապացպանի և մի քիչ ցորենի ալիւր խնդրում իւր երեխայի համար մի փոքրիկ բըլիթ եփելու, սակայն նա առաջարկում է դրա փոխարէն իւր հետ պլուխ մէկ անել։ Կինը սաստիկ վրդովուած հեռանում է ջրապացից և դիմելով Օհան Օձնեցուն, արտասունք թափում և պատմում։ Օհան Օձնեցին հրամայում է իւր ծառային

բանալ պահարանը և մի հաց տալ այդ կնոջը, ծառան պատասխանում, թէ իրենք էլ հաց չունին, բայց երբ Օհան Օձնեցին կրկնում է իւր հրամանը, ծառան բաց է անում պահարանը և զարմացմամբ երկու հաց գտնելով տալիս է կնոջը.

Նոյն երեկոյին Օհան Օձնեցին վեր է կենում, զնում Բաղդատի խալիֆայի մօտ օգնութիւն խնդրելու. Խալիֆան պատով ընդունում է նրան և տեսնելով նրա շափականց շքեղ հանդերձը, յանդիմանում է, թէ ինչպէս է, որ Քրիստոսը պարզութիւն է քարոզում, և ինքը, նրա հետեւողը, այդպէս շքեղ է հաղնեւում. Օհան Օձնեցին առանց պատասխանելու բաց է անում կուրծքը և խալիֆան տեսնում է, որ զեղեցիկ հանդերձի տակ, մարմնի վրայ խարազան է հաղած, որի վրայ նոյն խակ մանր մեխեր են անցկացրած, որ շարունակ ծակոտեն մարմինը.

Մինչդեռ խալիֆան զարմացած նայում է, Օհան Օձնեցու մարմնից մի կաթիլ արին է թռչում խալիֆայի կոյր աշքին, որ խկոյն բացւում է. Օհան Օձնեցին բռնում է խալիֆայի բրուս ձեռքերը և տանում իւր ծոցը, որանք ևս խկոյն բժշկում են. Խալիֆան այս հրաշքներից հիացած, խոստանում է կատարել Օհան Օձնեցու խնդրը, միայն ոչ թէ ուղղակի զօրք, այլ զրամ տալով, որպէսզի նա այդ զրամով ինքնակամ զօրք պատրաստէ. Օհան Օձնեցին ճարանատուած համաձայնում է. Երբ քանակի մասին խօսք է լինում, Օհան Օձնեցին մի կտոր թղթի վերայ զրում է մի քանի խօսք և տալիս խալիֆային, խնդրելով նրա քաշովը մէկ ոսկի տալ իրեն. Խալիֆան ծիծագելով ձգում է այդ թուղթը մի փոքրիկ կշռի նժարի մէջ, և միւսում ոսկիներ զարսում, բայց որբան էլ որ աւելացնում է՝ թուղթը չի կշռում. Հրամայում է մի բիշ աւելի մեծ, յետոյ աւելի մեծ և ի վերջոյ ամենամեծ կշռարը բերել և երբ իւր դանձերը շեն կարողանում կշռել այդ մի կտոր թուղթը, համաձայնում է հինգ հարիւր զինուուր տալ. Օհան Օձնեցին զօրքն առած զալիս է և երբ կամուրջից պիտի անց կենային, զիտում է, թէ որի պատիկերը զետում անզում է երեսւ. Եւ սրանից զուշակելով, որ այդ զինուուրին

լինակուած է, պատերազմում մեռնիլ, վերադարձնում է խայլիքին և միմիայն 300 զինուոր առած զնում է *): Եյս ժամանակ երկնքից մի խաչանիշ թուր է վայր ընկնում, որ Օհան Օձնեցին վերցնում է և մէջը կապում:

Եյս հրաշքը տեսնելով յստահատուում է վախչում: Օհան Օձնեցին հալածում է յոյներին չայտուանից և գերի բռնուու Յունաց պատրիարքին, որ սպաննացել էր, թէ եռացրած զրի մէջ է ձգելու Օհան Օձնեցուն: Մի կաթոայ ջուր եռացնելուց յիսոյ Օհան Օձնեցին դիմում է Յունաց պատրիարքին: Սպանացել էր ինձ եռացրած զրի մէջ ձգել: Ես այդ քեզ շեմ անի, միայն հրամայում եմ որ գոնէ այս խաչը ձգես զրի մէջ և հանես: Յունաց պատրիարքը հրաժարուում է:

«Տես, առաջ ես կը ձգեմ և կը հանիմ, յիսոյ էլ դու ձըդիր և հանիիր, առում է Օհան Օձնեցին և խաչակնքելով ջուրը, խաչը մէջը ձգում և հանում է առանց վեասուելու: Պատրիարքին որոշում է ինքն էլ փարձել, բայց հէնց որ ձեռքը ջուրն է կիսում, իսկոյն խաչում է, դուրս է քաշում:

—Այդքանը քեզ բաւական է իբր պատիժ, ասում է Օհան Օձնեցին և աղատ թողնում պատրիարքին:

Պատրիարքի հետ մի յօյն վարդապետ է լինում, որ տեսնելով այս հրաշքը՝ թողնում է պատրիարքին, և զայիս Օհան Օձնեցու հետ ճգնում: Այժմ էլ Օհան Օձնեցու վակրի հա-

*) Օհան Օձնեցու մասին եղած աւանդութիւնները սաստիկ տարածուած են. պ. Թաջրերունուն Շարուր-Դարալագեազի գաւառում այս միննոյն պատմութիւնը պատմելիս աւելացրել են և հետեւալը. Երբ արտարական գորքը կամուրջը անցկացաւ, շարքով կանգնեց և նրան միացաւ. հայոց զօրքը. այս ժամանակ և Օհան Օձնեցին իւրաքանչիւր զինուորի, թէ հայի և թէ արարի առանձին մատենալով համբուրեց նրանց գաղաթի մագէ գնջիկը: Փընջիկի մէջտեղ, ուր զիոզչում էին Օձնեցու շրթունքը, կողար սովի զուրու եկաւ, որից և ծագած է կըզըլըաշ կոչումը, այն է ուկէզգուխ: Ուրեմն հայերի գաղաթի մազամինչի մէջտեղի սափրած բոլորակը, որ հին ժամանակներում սովորական էր և այժմ վերցել է, համապատասխան է Օձնեցու շրթունքներով զրոշմած ուկուն: «Փորձ 1881 № IV. եր. 85.

բաւային կողմը յունական տապանագրով մի գերեզման են ցոյց տալիս, ուր, ասում են, ամփոփուած է վերոյիշեալ վարդապետի մարմինը.

Օհան Օձնեցին եւ Վասիլ զօրավետը.—Յունաց Վասիլ զօրապետը յունական զօրքով գալիս է հայերին կոտորելու. Օհան Օձներին մի սաստիկ ցաւ է ճգում Վասիլ զօրավարի մարմնի մէջ, այնպէս որ հայերի կոտորածը թողած, ուշըն ու միտրը կենդրոնացնում է իւր անձի թժշկութեան վրայ.

Երկար, ապարգիւն դիմումներից յետոյ Վասիլ զօրավարը լսում է, որ իրեն միմիայն Օհան Օձնեցին կարող է բըժըկել, ուստի և մարդիկ է ուկարկում և խնդրում իւր մօտ. Օհան Օձնեցին ձին հակառակ կողմով պայտել է տալիս, որ գնալիս հետքը չը նկատուի, զնում է Վասիլ զօրավարի մօտ, մի զիր գրում և տալիս նրան, որ զրոյ կուլ տայ. Վասիլ զօրավարը թուղթը կուլ է տալիս և խալյն առողջանում է: Ընմիջապէս զօրքը յետ է ուղարկում և ինքն էլ առանձնանում է Ս. Նշանի գանձում ճղնելու:

Մի օր Օհան Օձնեցին այցելութեան է գնում նրա մօտ, և իմանալով, որ զրի նեղութիւն է կրում, խաչակիքում է մի այրի մէջ, ուր խալյն չուր է գուրս զալիս. Ծյուտեղն այժմ կոշւում է Թնդոց, և այս զրի առաջ մոմեր են վառում և իրը դեղ գործ ածում.

ԱԽԵԼՈՐԴ ՊԱՍԵՐ ԵՒ ՏՈՆԵՐ

Լոռեցիների, մանաւանդ սրանց կանանց, համար պասը կազմում էր կրօնի ամենաէական մասը. Մի աւանդութիւն ասում է, թէ մի լոռեցի իւր բոլոր մեղքերը, զողութիւնը, զրպարտութիւնը, ուստ վկայութիւնն ու ուստ երգումը քահանային հեշտութեամբ խոստովանելուց յետոյ, կանգ է առել և լալով հրաժարուել է իւր ամենաամեծ մեղքը խոստովանելու. Բայց երբ քահանան ստիպել է հեկեկալով աւելացրել է, թէ մեծ պասին մի օր իւղի երեսին դրած հացից մի կտոր կերել է. Սակայն այժմ այս հաւատը բաւական թուլացել